ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1986 թ. դեկտեմբերի 30-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը, որտեղ, ըստ գիտությունների ակադեմիայի կանոնադրության, ընտրվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ և թղթակից անդամներ։

Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին Ռաֆայել Արամի Ալեքսանդրյանը, Ռուբեն Վիկտորի Համբարձումյանը *(մաթեմատիկա)*, Գրիգոր Արամի Գուրզադյանը *(աստղաֆիզիկա)*, Ռոբերտ Վարդգեսի Արզոյանը *(հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր)*, Արմեն Անուշավանի Գալոյանը *(բիոքիմիա)*, Հովհաննես Գեղամի Բակլավաջյանը *(ֆիզիոլոգիա, ֆիզիոլոգիապես ակտիվ նյութեր)*, Աշոտ Տիգրանի Ասլանյանը *(երկրաբանություն)*, Գագիկ Խորենի Սարգսյանը *(արևելագիտություն)*, Միքայել Խաչիկի Քոթանյանը *(տնտեսագիտություն, այդ թվում՝ արտադրության էկոնոմիկա և կազմակերպում)*, Ռուբեն Վարոսի Զարյանը *(արվեստագիտություն)*։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ ընտրվեցին Աների Բարսեղի Ներսիսյանը *(մաթեմատիկա)*, Լյուդվիգ Վասիլի Միրզոյանը *(աստղաֆիզիկա)*, Ռոբերտ Հովսեփի Ավագյանը, Ռուդոլֆ Մուրադի Մուրադյանը *(ֆիզիկա)*, Ալֆիկ Ռաֆայելի Մկրտչյանը *(ակուստաֆիզիկա)*, Ռաֆայել Ավետիսի Ղազարյանը, Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը *(ռադիոֆիզիկա և քվանտային էլեկտրոնիկա)*, Վլադիմիր Սարգսի Սարգսյանը *(մեխանիկա)*, Յուրի Լևոնի Սարգսյանը *(մեքենագիտություն)*, Արման Բագրատի Բուչակյանը, Հարություն Առաքելի Թերզյանը *(հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր)*, Վռամ Վաղինակի Դովլաթյանը, Մայա Հրանտի Ինճիկյանը *(օրգանական քիմիա)*, Իրմա Արմենակի Վարդանյանը *(ֆիզիկական քիմիա)*, Միսակ Արշամի Դավթյանը, Կոնստանտին Գրիգորի Ղարագյոզյանը *(բիոքիմիա)*, Յուրի Թադևոսի Ալեքսանյանը *(մոլեկուլյար կենսաբանություն)*, Ալեքսանդր Լևոնի Միքայելյանը *(սրտային վիրաբուժություն)*, Լիա Լևոնի Օսիպյանը *(բուսաբանություն և բույսերի ֆիզիոլոգիա)*, Սերգեյ Վաղարշակի Գրիգորյանը *(երկրաքիմիա)*, Ռաֆայել Հակոբի Մովսիսյանը *(գեոդեզիա)*, Հրանտ Ալեքսանի Ավետիսյանը, Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը *(պատմություն)*, Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանը *(ՍՄԿԿ պատմություն)*, Հրանտ Սմբատի Թամրազյանը *(գրականագիտություն)*, Վաչագն Արմենակի Դավթյանը *(գրականություն)*, Էդուարդ Ռաֆայելի Աթայանը *(լեզվաբանություն)*։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱՅՈՒՄ

1986 թ. նոյեմբերի 26-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական կոլեգիայի նիստը, որը քննարկեց «ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը «Կոմունիստ» ամսագրի մասին» և «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրության խնդիրները»։ Հաղորդումով հանդես եկավ ամսագրի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր Վ. Ա. Մ ի ք ա յ ե լ յ ա ն ը։ Նա խոսեց այն խնդիրների մասին, որոնք ծառացել են խմբագրության առաջ «Կոմունիստ» ամսագրի մասին ՍՄԿԿ Կենտկոմի որոշման լույսի ներքո։

Քննարկմանը մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ա. Ա ռ ա ք ե լ յ ա ն ը, Գ. Բ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն ը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ռ. Վ. Զ ա ր յ ա ն ը, բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Հ. Հ ա կ ո բ յ ա ն ը, բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Հ. Զ ա ք ա ր յ ա ն ը։ Նշվեց, որ «Կոմունիստ» ամսագրի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ բարձրացված հարցերի մի զգալի մասը վերաբերում է «Լրաբեր» ամսագրի խմբագրությանը։ Խմբագրությունը որոշակի աշխատանք է կատարում ՍՄԿԿ XXVII համագումարի առաջադրած որոշումների կենսագործման ուղղությամբ։ Ամսագրի հետհամագումարյան բոլոր համարներում պատշաճ տեղ է տրվել բազմաթիվ հոդվածների, որոնցում, համագումարի որոշումների լույսի ներքո, լուսաբանվում են տնտեսագիտական, փիլիսոփայական և պատմագիտական պրոբլեմները։ Մարտ ամսից սկսած ամսագիրը հրատարակել և հրատարակում է հոդվածներ՝ նվիրված նշված պրոբլեմներին, որոնց հիմնական մասը զետեղ-

վում է «ՍՄԿԿ XXVII համագումարի որոշումների լույսի ներքո» բաժնում։ Տնտեսագիտական հոդվածները գլխավորապես վերաբերել են գիտատեխնիկական առաջադիմության արագացմանը և դրան աղերսվող խնդիրների լուսաբանմանը։ Փիլիսոփայական հոդվածները նվիրված են էկոնոմիկայի և քաղաքականության հարաբերակցությանը, առարկայական միջավայրի գեղագիտական կազմակերպմանը և այլ հարցերի։ Պատմագիտական հոդվածների մի մասը նվիրված է Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին, Հայաստանում սովետական իշխանության հաստատմանը, սոցիալիստական շինարարության խնդիրներին, ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությանը, դաշնակցության դաղափարախոսության և պրակտիկ գործունեության քննադատությանը։

Ամսագրի խմբագրությունը նախապատրաստական աշխատանքներ է կատարում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 70-ամյակի ուղղությամբ։

Խմբագրությունը վերոհիշյալ և այլ պրոբլեմների առավել խոր լուսաբանման նպատակով ընդլայնել է հեղինակային կոլեկտիվի կազմը և այն համալրել է ակադեմիայի համակարգից դուրս՝ հանրապետությունում և Միության այլ վայրերում աշխատող հեղինակներով։

Սակայն ամսագրի խմբագրությունը դեռևս զգալի անելիքներ ունի իր աշխատանքները ՍՄԿԿ XXVII համագումարի կանխագծումների և ՍՄԿԿ Կենտկոմի նշված որոշման ոգով էլ ավելի բարելավելու ուղղությամբ։ «Լրաբերի» խմբագրական կոլեգիան որոշեց.

1. Հավանություն տալ և ընդունել ի գիտություն ՍՄԿԿ Կենտկոմի՝ «Կոմունիստ» ամսագրի մասին» որոշումը։

2. Այսուհետև ամսագրի էջերում առավել լայն տեղ հատկացնել այն հարցերի լուսաբանմանը, որոնք վերաբերում են գիտատեխնիկական առաջադիմության արագացմանը, նրա սոցիալ-փիլիսոփայական և մեթոդոլոգիական պրոբլեմներին, պատմական նոր պայմաններում հասարակության զարգացման դիալեկտիկային, հասարակության առաջընթաց շարժման մեջ մարդկային գործոնի դերի աճին, մարդկանց գիտակցության մեջ անհատապաշտական և սպառողական մտածելակերպի վերացմանը և այլն։

3. Ուշադրության կենտրոնում պահելով տնտեսագիտական և հանրապետության տնտեսական շինարարության խնդիրները, առանձնահատուկ տեղ տալ այն հոդվածների տպագրությանը, որոնք վերաբերում են ձեռնարկությունները իսկական տնտեսավարման փոխադրելուն, արտադրության ինտենսիվացմանը, արտադրանքի որակի բարձրացմանը, տնտեսական զարգացման տեմպերին, հանրապետության տնտեսական զարգացման հեռանկարներին, արտադրության մեջ սլետական և աշխատանքային կարգապահության ամրապնդմանը, պահանջարկի և մարդկային գործունեության խթանման վերլուծությանը, հասարակական, կոլեկտիվ ու անձնական շահերի համաձայնեցմանը և այլն։

4. Ամսագրում տպագրվող հոդվածների մեջ ընդլայնել այն նյութերի ցանկը, որոնցում հետազոտվում են կոմունիստական հասարակության կառուցման խնդիրները՝ իրենց բազմազանության մեջ, ՍՍՀՄ-ում ազգային հարաբերությունները, ժողովուրդների բարեկամությունը, բուրժուական գաղափարախոսության և մասնավորապես դաշնակցության դեմ մղվող պայքարի և աշխատավորների կոմունիստական դաստիարակության հարցերը։

5. Տպագրվող հոդվածներում այսուհետև ևս լուրջ ուշադրություն դարձնել քննվող հարցերի նեատմամբ դասակարգային, կուսակցական մոտեցմանը, կրոնական գաղափարախոսության սոցիալ-դասակարգային էության բացահայտմանը։

6. Ուժեղացնել պահանջկոտությունը հոդվածների գրախոսման նկատմամբ։ Հասնել այն բանին, որպեսզի վերացվի հոդվածների գրախոսման երբեմն նկատվող ձևական մոտեցումը։

7. Ընդլայնել գրախոսվող գրքերի քանակը։ Գրախոսությունները պետք է տան աշխատությունների օբյեկտիվ քննական վերլուծությունը, բացահայտեն դրանց գիտական նորույթը և նշանակությունը։

8. Նկատի ունենալով, որ ամսագիրը, խմբագրությունից անկախ պատճառներով, լույս է տեսնում զգալի ուշացումով, որն էապես ազդում է հոդվածների հրատարակության վրա, հարց բարձրացնել ԳԱ Նախագահության առաջ՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել այդ հարցը կարգավորելու համար։

9. 1987 թ. սեպտեմբերին ամսագրի խմբագրական կոլեգիայի նիստում լսել սույն որոշման կատարման մասին։